

**ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳԵՐԻՇԽՈՂ ԴԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ
ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ**

Տնտեսական մրցակցությունը շուկայական տնտեսության այն հիմնական մեխանիզմն է, որը խրախուսում է տնտեսվարող սուբյեկտներին լավագույն պայմաններով ապրանքներ և ծառայություններ առաջարկելու սպառողներին²: Որպեսզի տնտեսական մրցակցությունը լինի արդյունավետ՝ այն պահանջում է ընկերություններից գործել միմյանցից անկախ, սակայն, միաժամանակ, ենթարկվել այն մրցակցային ճնշմանը, որը գալիս է շուկայում գործող այլ տնտեսվարող սուբյեկտներից³: Արդյունավետ մրցակցային քաղաքականությունը ոչ միայն ապահովում է տնտեսվարող սուբյեկտների, սպառողների շահերի պաշտպանությունը, այլև նպաստում է տնտեսական զարգացմանը՝ ստեղծելով համապատասխան միջավայր նորարարության և տեխնիկական առաջընթացի համար: Տեսականորեն մրցակցությունը նպաստում է տնտեսական աճին, սակայն պրակտիկայում դժվար է լինում ապահովել գործող, իրական մրցակցային շուկայի գոյությունը և դրանում ընթացող տնտեսական գործընթացների բնականոն ընթացքը: Հաշվի առնելով սահմանադրորեն ամրագրված ազատ տնտեսական մրցակցության⁴ և դրա իրավական կարգավորման կարևորությունը՝ սույն հոդվածի շրջանակներում կուսումնասիրվեն տնտեսական մրցակցության պաշտպանության ՀՀ և ԵՄ մոդելները, ինչպես նաև շուկայում գերիշխող դիրքի չարաշահման ոլորտում իրավական կարգավորման բացերը, որոնք գոյություն ունեն ՀՀ-ում: Կվեդրուծվեն այն հիմնահարցերը, որոնք վերաբերում են տնտեսվար

¹ ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Ա. Գ. Ղազինյան:

² David Medhurst. A Brief and Practical Guide to EU Law. 3rd Edition. 2001, Chapter 12. Competition

³ http://ec.europa.eu/competition/antitrust/overview_en.html

⁴ ՀՀ Սահմանադրություն, Հոդված 8:

րող սուբյեկտների գերիշխող դիրքի չարաշահման դեմ պայքարում ՀՀ ՏՄՊՊՀ-ի լիազորությունների շրջանակին: Մասնավորապես,

- ի՞նչ խնդիրներ է լուծում ՀՀ ՏՄՊՊՀ-ն շուկայում գերիշխող դիրքի չարաշահման դեմ պայքարում,

- արդյոք այն ունի բավարար լիազորություններ այս ոլորտում իր առջև դրված խնդիրների լուծման համար,

- թե գոյություն ունի՞” ՀՀ ՏՄՊՊՀ-ին լրացուցիչ լիազորությունների տրամադրման անհրաժեշտություն՝ հաշվի առնելով դրա կողմից գերիշխող դիրքի չարաշահման դեպքերի բացահայտման և կանխարգելման գործառույթը առավել արդյունավետ իրականացնելու մարտահրավերը:

Կիրառելով համեմատախրավական մեթոդը՝ սույն աշխատանքը, որպես լավագույն օրինակ, կհիմնվի շուկայում գերիշխող դիրքի չարաշահման դեմ պայքարում Եվրոպական հանձնաժողովի դերի ու լիազորությունների ուսումնասիրության վրա:

Այսպիսով, Եվրոպական միության հիմնադիր-հայրերի՝ Ժան Մոնեի և Ռոբերտ Շումանի առաջնային նպատակներից մեկը հանդիսանում էր միասնական շուկայի ստեղծումը: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր ստեղծել մրցակցային իրավունք՝ հիմնված թափանցիկ, արդար կանոնակարգված համակարգի վրա: Տնտեսական մրցակցության ոլորտում առաջին նորմատիվ-իրավական ակտը ԵՄ Խորհրդի 17/62 կանոնակարգն էր⁵, որն ընդունվեց *Van Gend en Loos*⁶ դատական նախադեպից առաջ, երբ դեռ ամբողջապես չէր հաստատվել Եվրոպական ընկերակցության (այժմ՝ Եվրոպական միություն) իրավունքի գերակայությունը: ԵՆ անդամ պետությունների դատարանների կողմից ԵՆ մրցակցային իրավունքի նորմերի միատեսակ մեկնաբանությունն ապահովելու նպատակով տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում Եվրոպական հանձնաժողովին տրվեցին լայն լիազորություններ: Եվրոպական հանձնաժողովին տնտեսական մրցակցության իրավական կարգավորման ոլորտում նման լայն լիազորություններով օժտելը մի շարք տեսաբանների

⁵ EEC Council: Regulation No 17: First Regulation implementing Articles 85 and 86 of the Treaty

⁶ Case 26-62. NV Algemene Transport- en Expeditie Onderneming van Gend & Loos v Netherlands Inland Revenue Administration

կողմից քննադատության արժանացավ⁷: Մասատրիխտի համալսարանի պրոֆեսոր Թոմաս Քրիստենսենի կարծիքով Եվրոպական հանձնաժողովը ԵՄ այն ինստիտուտն է, որն իր մեջ, կարծես թե, միավորում է պետական իշխանության տարբեր ճյուղերին բնորոշ մի շարք հատկանիշներ: Տնտեսական մրցակցության իրավական կարգավորման ոլորտում այն ունի տեսչական, քաղաքականության մշակման, *amicus curiae*⁸ և գործադիր իշխանությանը բնորոշ լիազորություններ: Եվրոպական հանձնաժողովի նման խառը լիազորությունները խանգարում են իր իսկ «իշխանությունները» հավասարակշռելուն և սպառնալիք են ստեղծում ԵՄ-ում տնտեսական մրցակցության իրավական կարգավորման արդյունավետության համար⁹:

Այնուամենայնիվ, ԵՄ Ընդհանուր իրավասության դատարանը (General Court) իր 2013 թ. սեպտեմբերի 6-ի վճռով (մեկ վարույթում միացված գործեր T-289/11, T-290/11, T-521/11 *Deutsche Bahn inspections*) հաստատեց տնտեսական մրցակցության պաշտպանության հարցերում Եվրոպական հանձնաժողովին լայն լիազորությունների տրամադրման անհրաժեշտությունը¹⁰, ինչպես նաև պարզաբանեց վաղորդյան ստուգումների (*dawn raids/spot checks*) հետ կապված մի շարք հիմնահարցեր¹¹:

Տնտեսական մրցակցության խախտումները կանխարգելելու և վերացնելու համար ԵՄ ինստիտուտների կողմից մշակվել են մի շարք իրավական մեխանիզմներ: Ձեռնարկությունների միջև հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահման (համապատասխանաբար կարգավորվում են ԵՄԳՊ-ի հոդված-

⁷Thomas Christiansen, "Tensions of European Governance: Politicized Bureaucracy and Multiple Accountability of the European Commission, 4 JOURNAL OF EUROPEAN PUBLIC POLICY 73 (1997).

⁸ Cornell University Law School, Legal Information Institute. http://www.law.cornell.edu/wex/amicus_curiae

⁹ "A concentration of power upsets its balance", as introduced by Montesquieu. Though this theory relates to governmental policy, it may be successfully applied to the business world as well.

¹⁰ Mayer Brown, Antitrust Investigations, October 2013, EU General Court confirms wide inspection powers of the European Commission http://www.mayerbrown.com/files/Publication/b442c826-2b5b-4971-9cf4-50a0781c9226/Presentation/PublicationAttachment/3f5c5a2b-8176-4c45-bbeb-64cf46c267e7/Antitrust_update_oct0713.pdf

¹¹ Judgment of the General Court (Fourth Chamber), Joined Cases T-289/11, T-290/11 and T-521/11 – *Deutsche Bahn a.o. / Commission*.

ներ 101 և 102-ով) կանխարգելման և վերացման մեխանիզմների և ընթացակարգերի բովանդակությունը կարելի է բացահայտել ԵՄ Խորհրդի 1/2003 կանոնակարգի միջոցով¹²:

1/2003 կանոնակարգի 17-21-րդ հոդվածները վերաբերում են տնտեսական մրցակցության խախտման դրսևորումները հետաքննելու Եվրոպական հանձնաժողովի լիազորություններին: Մասնավորապես, այն դեպքում, երբ տնտեսվարող սուբյեկտները կնքում են հակամրցակցային համաձայնություններ կամ չարաշահում են իրենց գերիշխող դիրքը, ինչը հանգեցնում է ընդհանուր շուկայում մրցակցության սահմանափակմանը կամ խաթարմանը, Եվրոպական հանձնաժողովն իրավունք ունի այդ սահմանափակումները վերացնելու նպատակով ստուգում իրականացնել համապատասխան ապրանքային շուկայում կամ հակամրցակցային համաձայնությունների շուրջ: Գերիշխող դիրքի չարաշահման դեպքերի քննության ընթացքում այն իրավունք ունի համապատասխան տնտեսվարող սուբյեկտներից կամ դրանց միություններից պահանջելու անհրաժեշտ տեղեկատվություն ԵՄԳՊ-ի Հոդված 102-ով նախատեսված խախտումները բացահայտելու նպատակով, ինչպես նաև իրավունք ունի այդ նպատակով անցկացնելու անհրաժեշտ ստուգումներ¹³: Ստուգումներ անցկացնելիս Եվրոպական Հանձնաժողովի պաշտոնատար անձինք և դրա կողմից լիազորված այլ իրավասու անձինք լիազորված են՝

ա) մուտք գործել տնտեսվարող սուբյեկտների և դրանց միությունների շենքեր, շինություններ, հողատարածքներ և տրանսպորտային միջոցներ,

բ) ուսումնասիրել ֆինանսական հաշվետվություններ և գործարարական գործունեությանը վերաբերող այլ փաստաթղթեր՝ անկախ նրանից, թե ինչ կերպով են դրանք պահվում,

գ/ վերցնել կամ ստանալ տվյալ փաստաթղթերի կրկնօրինակները կամ քաղվածքները,

դ/ արգելանք տարածել գործունեության որևէ տարածքի և ֆինանսական հաշվետվությունների կամ փաստաթղթերի վրա այն ժա-

¹² Council Regulation (EC) No 1/2003 of 16 December 2002 on the implementation of the rules on competition laid down in Articles 81 and 82 of the Treaty (Text with EEA relevance) <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX:32003R0001>

¹³ Regulation 1/2003 Art. 20

մանակահատվածի ընթացքում, որն անհրաժեշտ է իրականացվող ստուգման համար,

ե/ հարցաքննել տնտեսվարող սուբյեկտների կամ դրանց միությունների ներկայացուցիչներին կամ աշխատակազմի անդամներին ստուգման նպատակի և առարկայի հետ կապված հանգամանքների կամ փաստաթղթերի շուրջ բացատրություններ տալու նպատակով, ինչպես նաև արձանագրել պատասխանները¹⁴:

1/2003 կանոնակարգի այս հոդվածում, ըստ էության, բացահայտվում է «վաղորդյան ստուգման» բովանդակությունը: Եվրոպական հանձնաժողովի համար վաղորդյան ստուգումը ընդհանուր շուկայում տարբեր տնտեսվարող սուբյեկտների կողմից մրցակցային կանոնների խախտումների կանխարգելման գործուն միջոց է հանդիսանում: Ողջամիտ կասկածների առկայության դեպքում Եվրոպական հանձնաժողովի իրավասու է իրականացնել վերը բերված գործողություններից յուրաքանչյուրը: 2013 թ. վերջինս հրատարակել է գործարարական գործունեության իրականացման համար օգտագործվող շինություններում վաղորդյան ստուգումների անցկացման մասին վերանայված ուղեցույց (Revised Guidance on Conduct of Dawn Raids)¹⁵, որն առավելապես վերաբերում է տնտեսվարող սուբյեկտներից տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով տեղեկատվության ձեռքբերման կարգին և Եվրոպական հանձնաժողովի հետ համագործակցելու դրանց պարտավորությանը:

Դատելով Եվրոպական միության տնտեսական մրցակցության պաշտպանության բազմամյա փորձից՝ ԵՄ-ի մրցակցային օրենսդրությունը նույնպես կրել է հսկայական փոփոխություններ և լրամշակումներ: Սակայն, ամենահատկանշականն այն է, որ ԵՄ տնտեսական մրցակցության իրավական կարգավորման ճանապարհին մինչ օրս կան ու կլինեն այնպիսի պրակտիկ հիմնահարցեր, ինչպիսիք են Եվրոպական հանձնաժողովի լիազորությունների ծավալի վերաբերյալ տարակարծությունները, ընդհանուր շուկայում տնտեսական մրցակցության պաշտպանությունը Եվրոպական հանձնաժողովի, ինչպես նաև անդամ պետությունների տնտեսական մրցակցությո-

¹⁴ Regulation 1/2003 Art. 20

¹⁵ Explanatory note to an authorisation to conduct an inspection in execution of a Commission decision under Article 20(4) of Council Regulation No 1/2003 http://ec.europa.eu/competition/antitrust/legislation/explanatory_note.pdf

յան պաշտպանության պետական մարմինների մակարդակում և, վերջապես, այս բոլոր մարմինների համագործակցությունը և այդ համագործակցության կազմակերպման արդյունավետության ապահովումը:

Եթե համեմատենք շուկայում գերիշխող դիրքի չարաշահման դեմ պայքարում Եվրոպական Հանձնաժողովի ունեցած լիազորությունների ծավալը ՀՀ ՏՄՊՊՀ-ի՝ ապրանքային շուկայում գերիշխող դիրքի չարաշահման դեմ պայքարելու համար սահմանված լիազորությունների հետ, ապա կտեսնենք, որ հիմնականում շատ լիազորություններ համընկնում են: Մասնավորապես, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի Հոդված 19 (1)-ը ամրագրում է, որ Հանձնաժողովն իրավունք ունի ընդունելու որոշումներ

- ապրանքային շուկաների ուսումնասիրության,
- վարչական վարույթ հարուցելու, ստուգում, ուսումնասիրություն իրականացնելու,
- ապրանքային շուկաների սահմանների, այդ շուկայում տնտեսվարող սուբյեկտների գերիշխող դիրքի առկայության, ինչպես նաև դրանով պայմանավորված միջոցառումների իրականացման,
- գերիշխող դիրքը մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ չարաշահող տնտեսվարող սուբյեկտների ապախոշորացման (բաժանման, առանձնացման, փայաբաժնի կամ միջոցների օտարման),
- տնտեսվարող սուբյեկտներին և նրանց պաշտոնատար անձանց սույն օրենքի խախտման համար պատասխանատվության ենթարկելու,
- տնտեսվարող սուբյեկտներին կամ դրանց պաշտոնատար անձանց՝ սույն օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ զգուշացումներ տալու,
- **նախազգուշացում** տալու՝ խախտումները շտկելու և (կամ) հետագայում բացառելու հանձնարարությամբ, **տուգանք** նշանակելու՝ խախտումները շտկելու և (կամ) հետագայում բացառելու և տուգանքը վճարելու հանձնարարությամբ՝ սահմանելով հանձնարարության կատարման ժամկետ,

- տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության կիրառման հետ կապված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ տալու մասին,

- կատարելու օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ ՀՀ ՏՄՊՊՀ-ն շուկայում գերիշխող դիրքի չարաշահման դեմ պայքարում իր առջև դրված խնդիրները արդյունավետորեն չի լուծում: Որո՞նք են այն խոչընդոտները, որ գոյություն ունեն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության, մասնավորապես, շուկայում գերիշխող դիրքի չարաշահման դեմ պայքարի ոլորտում:

Այս հարցին պատասխանելու համար, նախ և առաջ, պետք է ուսումնասիրել ՀՀ-ում այն պատմական իրականությունը, որում առաջացավ տնտեսական մրցակցության պաշտպանության մարմին ու մեխանիզմներ ստեղծելու գաղափարը:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմինը՝ ՀՀ ՏՄՊՊՀ-ն հիմնադրվել է 2001թ. հունվարի 13-ին՝ ՀՀ-ում գործարարական գործունեության համար մրցակցային միջավայր ապահովելու և տնտեսական մրցակցությունը պաշտպանելու ու խրախուսելու նպատակով: Ստեղծվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ այն գործում է սույն օրենքի այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա և ինքնուրույն է իր իրավասության շրջանակներում: Այս առումով հարկ է նշել, որ օրենքի բնօրինակը լրջորեն սահմանափակում էր Հանձնաժողովի անկախությունը: Այն ենթադրում էր, որ եթե Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված Հանձնաժողովի տարեկան ծրագիրը և հաշվետվությունը չէին հաստատվում ԱԺ-ի կողմից, ապա Հանձնաժողովի անդամները 10 օրվա ընթացքում պետք է ներկայացնեին իրենց հրաժարականը ՀՀ նախագահին¹⁶: Արդյունքում, Հանձնաժողովի ջանքերով օրենքի այս դրույթը կորցրեց իր ուժը, երբ օրենքում կատարվեցին համապատասխան փոփոխություններ: Կատարված փոփոխություններով Հանձնաժողովին հնարա-

¹⁶ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսվարող սուբյեկտները ունեն որոշակի իշխանություն Ազգային ժողովի որոշումների վրա ազդելու իմաստով (lobbying)՝ պարզ է դառնում, որ Հանձնաժողովը կհայտնվեր խոցելի իրավիճակում, եթե օրենքի այս դրույթը պահպաներ իր ուժը:

վորություն ընձեռվեց յուրաքանչյուր տարի ԱԺ-ում ուղղակի հրապարակել հաջորդ տարվա իր գործունեության ծրագիրը¹⁷: Մա շատ կարևոր քայլ էր Հանձնաժողովի իշխանությունը և անկախությունը ամրապնդելու ուղղությամբ: Գործող օրենքով որևէ քաղաքական ուժ Հանձնաժողովի ընդունած որոշումները անվավեր ճանաչելու իշխանություն չունի:

Բացի քաղաքական գործոններից, Հայաստանում ապրանքների և ծառայությունների շուկաներում մրցակցության զարգացմանը խոչընդոտում են շուկայի կառուցվածքը, սահմանափակումները, անհավասար պետական օժանդակությունը, պետական մասնակցությամբ հզոր ընկերությունների առկայությունն ու անարդյունավետ մրցակցային կանոնների հարկադրումը: «Գլոբալ մրցակցության ինդեքսի» /ԳՄԻ/ համաձայն, մրցակցային քաղաքականության արդյունավետության և տեղական մրցակցության ինտենսիվության մակարդակով Հայաստանը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների /ECA/ շարքում զբաղեցնում է ամենացածր տեղը: Այս ցածր վարկանիշի հիմնական պատճառը Հայաստանում ճկուն տնտեսության բացակայությունն է, որը բերում է զբաղվածության և եկամուտների ցածր մակարդակի: Համադրելի այլ պետությունների համեմատ, Հայաստանում տնտեսության հիմնական ճյուղերում մեկ կամ մի քանի ընկերությունների գերիշխող դիրքն ավելի ուժեղ է արտահայտված¹⁸:

Եթե համեմատենք ՀՀ ՏՄՊՊՀ-ի լիազորությունները Եվրոպական հանձնաժողովին վերապահված լիազորությունների շրջանակի հետ, ապա ակնհայտ կդառնա, որ ՀՀ ՏՄՊՊՀ-ն չունի բավարար լիազորություններ գերիշխող դիրքի չարաշահման դեմ արդյունավետ պայքար իրականացնելու համար:

Մասնավորապես, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի Հոդված 19-ի 1-ին մասի «գ» կետը ամրագրում է, որ Հանձնաժողովն իրավունք ունի տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտման կամ Հանձնաժողովի որոշման կատարման նկատմամբ վերահսկո-

¹⁷ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, Հոդված 27:

¹⁸ Republic of Armenia, «Accumulation, Competition, and Connectivity», April 2013, The World Bank Report, p. 43-62.

դուրսի անպատակով իրականացնելու ստուգում, ուսումնասիրություն (այդ թվում՝ հսկիչ գնում) և (կամ) դիտանցում¹⁹:

Ստուգումների անցկացման կարգը սահմանված է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով (ընդունված 2008 թ. հուլիսի 17-ին): Մասնավորապես, սույն օրենքի Հոդված 3-ը նախատեսում է, որ «... հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, *ստուգումն սկսելուց առնվազն երեք աշխատանքային օր առաջ*, տրվում է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին...»:

Գործնականում, դա նշանակում է, որ ՀՀ ՏՄՊՊՀ-ի տեսչական լիազորությունները սահմանափակված են գուտ ստուգելով՝ արդյոք տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվությունը ճշգրիտ է, թե ոչ հայտարարելով ստուգում և այդ մասին երեք աշխատանքային օր առաջ ծանուցելով տնտեսվարող սուբյեկտին: Այս առումով, ՀՀ ՏՄՊՊՀ-ի տեսչական լիազորությունները դառնում են թույլ և անբավարար, երբ համեմատում ենք տնտեսական մրցակցության պաշտպանության առավել զարգացած համակարգեր ունեցող պետությունների կամ այնպիսի ինտեգրացիոն կազմավորման հետ, ինչպիսին, օրինակ, ԵՄ-ն է:

Մասնավորապես, ի տարբերություն Եվրոպական հանձնաժողովի, ՀՀ ՏՄՊՊՀ-ն իրավասություն չունի իրականացնելու վաղորդյան ստուգումներ (dawn raids or spot checks), այն է՝ տնտեսվարող սուբյեկտի կողմից իրացվող կամ ձեռքբերվող ապրանքի գնի, որակի, քանակի, այլ բնութագրերի, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործողությունների կամ վարքագծի բացահայտման նպատակով տնտեսվարող սուբյեկտի գործունեության վայրում (այդ թվում՝ առևտրի օբյեկտում) իրականացվող դիտարկում՝ առանց տնտեսվարող սուբյեկտին նախօրոք ծանուցելու պարտավորության²⁰:

Վաղորդյան ստուգումների ինստիտուտի նախատեսումը ՀՀ օրենսդրությամբ կրացառեր կամ էականորեն կնվազեցներ տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի չարաշահման փաստի

¹⁹ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, Հոդված 19:

²⁰ UNITED NATIONS CONFERENCE ON TRADE AND DEVELOPMENT, Voluntary peer review of competition policy: Armenia Overview, Report by the UNCTAD secretariat, UNITED NATIONS, New York and Geneva, 2010

http://unctad.org/en/Docs/ditccpl20101overview_en.pdf

արձանագրման համար անհրաժեշտ ապացույցները ոչնչացնելու, թաքցնելու կամ սելեկտիվ կերպով ներկայացնելու հնարավորությունը: Հաշվի առնելով այս հարցի կարևորությունը՝ տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում ՀՀ ՏՄՊՊՀ-ի ազդեցությունը և իշխանությունը ամրապնդելու եղանակներից մեկը դրա տեսչական լիազորություններն ընդլայնելն է՝ գերիշխող դիրքի չարաշահման դեմ պայքարում ՀՀ ՏՄՊՊՀ-ին օժտելով վաղորդյան ստուգումներ իրականացնելու լիազորությամբ (the power to conduct dawn raids): Վաղորդյան ստուգումների նախատեսմամբ ՀՀ ՏՄՊՊՀ-ն ի վիճակի կլինի իրականացնելու ՀՀ-ում տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի չարաշահման դեպքերի վերաբերյալ առավել արդյունավետ հետազոտություն: Թվում է թե վաղորդյան ստուգումներ իրականացնելու լիազորության նախատեսումը զուտ տեխնիկական խնդիր է, սակայն այս լիազորության առկայությունն է, որ դարձնում է գերիշխող դիրքի չարաշահման դեմ պայքարն առավել արդյունավետ, ինչի մասին վկայում է Եվրոպական հանձնաժողովի օրինակը: ՀՀ ՏՄՊՊՀ-ի կողմից տեսչական նման լիազորությունների հնարավոր չարաշահումները կանխարգելելու կամ վերացնելու համար պետք է իրականացվի պատշաճ դատական վերահսկողություն: Արդյունավետ դատական վերահսկողությունը կարող է հակակշռել և զսպել ՏՄՊՊՀ-ի՝ իր լիազորությունները չարաշահելու միտումը:

Այսպիսով, չնայած ՀՀ-ում վերջին տարիներին կատարված որոշ բարեփոխումների՝ տնտեսական մրցակցության պաշտպանության իրավական դաշտը դեռևս զգալի թերություններ ունի: Հակամրցակցային համաձայնությունների վերաբերյալ, գերիշխող դիրքի չարաշահման և համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն նախատեսող օրենքի դրույթները վերանայման կարիք ունեն: Այնուամենայնիվ, ֆունկցիոնալ տեսանկյունից ամենակարևոր հիմնահարցերից մեկը ՀՀ ՏՄՊՊՀ-ին տրված տեսչական լիազորությունների անբավարարությունն է: Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը պատասխանատու է տնտեսական մրցակցության զարգացման համար, սակայն իր այս մանդատն իրականացնելու ընթացքում հանձնաժողովը բախվում է մի շարք կարևոր ինստիտուցիոնալ խնդիրների: ՀՀ-ում գործող իրավական դաշտը և պետական քաղաքականությունը ՏՄՊՊՀ-ին չեն ապահովում բավարար լիազորություններով տնտեսական մրցակցությունն առավել

արդյունավետ պաշտպանելու համար, և ՏՄՊՊՀ-ն ունի իր սահմանափակ կարողություններն ընդլայնելու խնդիր: Այս առումով, կարծում եմ, հետևելով Եվրոպական միության օրինակին, անհրաժեշտ է առաջին հերթին, ամրապնդել ՀՀ ՏՄՊՊՀ-ի փաստահավաք լիազորությունները՝ օրենքում նախատեսելով վաղորդյան ստուգումների ինստիտուտը: Արդյունքում, ապրանքային շուկայում տնտեսվարող սուբյեկտների գերիշխող դիրքի չարաշահման դեպքերի կանխարգելումն ու վերացումը ՀՀ ՏՄՊՊՀ-ի կողմից կլինի ավելի օպերատիվ, իսկ իրենց գերիշխող դիրքը չարաշահող սուբյեկտների նկատմամբ նշանակվող տուգանքները՝ ավելի օբյեկտիվ և հիմնավորված:

Анжела Оганисян

аспирант кафедры европейского и международного права ЕГУ

**ПОЛНОМОЧИЯ ГОСУДАРСТВЕННОЙ КОМИССИИ РА ПО
ЗАЩИТЕ ЭКОНОМИЧЕСКОЙ КОНКУРЕНЦИИ В БОРЬБЕ
СО ЗЛОУПОТРЕБЛЕНИЕМ ДОМИНИРУЮЩИМ
ПОЛОЖЕНИЕМ НА РЫНКЕ**

В статье обсуждаются актуальные проблемы пересмотра и расширения полномочий Государственной комиссии по защите экономической конкуренции в борьбе со злоупотреблением доминирующим положением на рынке. В частности, в статье анализируются ключевые проблемы, связанные со злоупотреблением хозяйствующими субъектами их доминирующим положением на рынке, а также рамки полномочий Комиссии в борьбе со злоупотреблением доминирующим положением. Используя сравнительный метод, работа основывается на изучении роли и полномочий Европейской Комиссии в борьбе против злоупотребления доминирующим положением на рынке, как лучшего примера. В статье обосновывается необходимость закрепления в законодательном порядке полномочий Государственной комиссии РА по защите экономической конкуренции по проведению внезапных проверок с целью сбора доказательств о злоупотреблении доминирующим положением со стороны хозяйствующих субъектов.

**THE POWERS OF THE STATE COMMISSION IN THE RA FOR THE
PROTECTION OF ECONOMIC COMPETITION IN THE FIGHT
AGAINST THE ABUSE OF DOMINANT POSITION
IN COMMODITY MARKET**

This article presents the main problems pertaining to revision and expansion of powers of the RA State Commission for the Protection of Economic Competition in the fight against the abuse of dominant position of economic entities in commodity markets. The key issues relating to the abuse of dominant position of economic entities and the prerogatives of the RA SCPEC in the fight against this abuse are analyzed in the above-mentioned article. This paper is based on the study of the European Commission's best practice, its role and powers in the fight against abuse of dominant position in the commodity markets. It, also, specifies the obstacles that exist in the RA economic competition protection system, particularly, when it comes to the abuse of dominant position. This article substantiates the necessity to amend and to strengthen the RA economic competition legislation by extending the RA SCPEC's fact-finding powers and providing it with the authorities to conduct dawn raids.

Բանալի բառեր՝ տնտեսական մրցակցության պաշտպանություն, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, տնտեսվարող սուբյեկտ, ապրանքային շուկա, գերիշխող դիրքի չարաշահում, վաղորդյան ստուգումներ, Եվրոպական միություն, Եվրոպական հանձնաժողով, 1/2003 կանոնակարգ:

Ключевые слова: защита экономической конкуренции, Государственная комиссия по защите экономической конкуренции Республики Армения, хозяйствующий субъект, рынок, злоупотребление доминирующим положением, внезапная проверка, «рейды на рассвете», Европейский союз, Европейская комиссия, Регламент 1/2003.

Key words: protection of economic competition, the State Commission for the Protection of Economic Competition of the Republic of Armenia, economic entity, commodity market, abuse of dominant position, dawn raids/spot checks, European Union, European Commission, Regulation 1/2003.